

Ամեն օր կերտարակուի : — Հատր 40 փարսց է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արժանի Մէճիտ պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 400 թուոց համար, թղթաաարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման սոողը 40 փարսց է մէկ անգամի համար : — Արագրիս վերագրեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ալաթիիս Ս. Առաւորիչ Եկեղեցոյ վարի դրանը կից Նոր Գրատունը :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կրօնական ու ֆաղաքական ժողովոց ազգային ընտրութեամբ վերահաստատութեան համար Պատրիարքարանէն Բ. Գուռը գրուած թագրիին պատասխանը տակաւին մինչև այս առաւօտ եկած չէ :

— Սերասափոյ խնդրոյն կարգադրութեան համար կազմուած յանձնաժողովն երէկ առաջին նիստն ըրաւ ընդ նախագահութեամբ ամեն Ս. Պատրիարք Հօր : Չեմք գիտեր թէ կնչ արդիւնք ունեցած է : Վարժապետեան գեր. Ներսէս Եպիսկոպոսն ալ ներկայ էր, որուն համար երէկ ի լրոյ ծանուցած էինք թէ հրաժարած է այս յանձնաժողովին անդամակցութենէն :

— Երեսպակայ նախարդ փոխանորդ արժ. ֆիլիպպոս վարդապետը անցեալ շաբթու մարտաքաղաքէն ճաբայ ելաւ գէտ ի Երեսպակ :

— Բումելի — հիսարի ծովեզրը նոյն գիւղացի հոց մը գիւղուածով ծովը խնկեր է, և խեղճը քիչ մնացեր է պիտի խեղճութի եզեր եթէ մարդասեր անձ մը տեսնուրվ ամենայն արիւտ :

Թեամբ ծովը շնտուի ու չազատէ : Ծովէն հանուեր է բոլորովին անշունչ և ուսեցած . սակայն անյապաղ և աղքատ դու դարմաններ ըլլալով շունչ աւեր և մէկերկու օրէն բոլորովին աւողացեր է :

... Խմբագիր
Վարժարանիս Ս. Ն. Շահնազարեան մեմուլէն հետեւեալ դրքերն իւրոյս ընծայուեցան :

Կարպետ վարդապետի Շահնազարեանց
Ռուսա միջնադասական Հասարոյ
Ըստ վարդապետաթեան Առաւելական, Մի Սուրբ և Կախողիկ Եկեղեցոյ Հոյսադրանայ
Այս աշխատութիւնը՝ որ արժանոյիշատակ Շահնազարեանց կարապետ վարդապետի գործոց գլուխն է, մինչև հիմայ մերագրին մէջ հրատարակեալ այս տեսակ գործոց առաջինը կհամարուի՝ իւր պարզ և գլխիմաց սծովը և աստուածաբանական վրձնով բացատրութիւններովը : Այս գործը չէ թէ միայն Եկեղեցականաց, այլ և ամէն հայու օգտակար է ունենալ իբրև փահան հասարոյ Ս. Եկեղեցոյ և ազգայնութեան թշնամացոյ գէտ :

Կը ծախուի ամէն գրավաճառաց
քով, և մասնաւորապէս Ս. Ն. Շահ-
նազարեան վարժարանը, և Չաղմաղ-
ճըլար եօզուշու Գավաթեան գրա-
տունը: Գին մէկ արծաթ Մէճիտ:

Բ.

Համառօտ աշխարհագրութեան

Ս. Մեխայէլեանի

Գ. պատմութեան

Գրն 10 դր՝ քրոշ

Գ.

Նուէր Կալանդոյի

Ռաբէտաշ Սարեանի

Թարգմանութեան

Եզնիկ Վարդապետի Աղանանայ

Աղջկանց քրիստոնէական դաս-
տիարակութեան մասամբ իւր-ք-օգ-
նելու նպատակաւ՝ արժ. Եզնիկ վար-
դապետ այս անգամ յառաջիկայ տա-
քեղ լիտյն աւթիւ այս թարգմանու-
թիւնը կրնձայէ նոցա՝ ինչպէս որ յա-
ռաջարանին մէջ ըսած է:

Յուսայի է թէ վարժապետաց ակ-
նարկութենէն չլիւրացիր այս դոյն աշ-
խատութիւնը, և իւր նպատակին կը
հասնի: Այս է միայն թարգմանչին իղ-
ճը: Ամէն գրավաճառաց քով: Գին
մէկ դրքոշ: Ս. Մեխայէլեան

ԽՈՒՆ ԼՈՒՔԻՆ՝

Եգիպտոսի Խրախիլէն տակաւին
պատասխան չիայ: Սէրվէր էֆէնտին
հան համնէն ի վեր, Խրախիլ յաճախ
կխորհրդակցի իւր պաշտօնէից հեւ՝
կայսերական հրովարտակին պատաս-
խան տալու համար: — Հեռագիր մի
կճանուցանէ թէ Խրախիլ իւր առջի
պատասխաններուն մէջ հաստատ պի-

տի մնայ, բայց տակաւին ստոյգ չսեպ-
ուիր որեւէ լուր, մինչև որ պաշտօնա-
կան լուր չեղէ:

— Մեղդիկ երթալու համար Գէտու-
թենճէն արմախք բեռնաւորեալ անդ-
ղիական առադաստաւոր նաւ մը, և
Խպրայիլէն դարձեալ արմախք բեռնա-
ւորեալ անդղիական մեծ շոգենաւ
մը անցայտ եղած են առաջինը վեց և
երկրորդը տասը ամիսէ ի վեր: Կհար-
ծուի թէ երկուքն ալ ընկղմած են ի-
րենց բոլոր նաւաստիներովն ու բեռ-
ներովը:

— Հալէպի կուսակալութեան կեդ-
րոնական միւթհարըրֆ անուանեցաւ
Թարապուլուօր Շամի նախորդ միւթհ-
արըրֆ ֆեռամիլ փաշա:

— Իզվիլնիքի նախորդ միւթհաւ-
ըրֆ Բատուֆ փաշան Թարապուլուօր —
Շամի միւթհարըրֆ կարդեցաւ:

— Երրորդ կարդի Օսմանի յէ պատ-
ուանչան արուեցաւ կայսերական հե-
ռադրատան տնօրէն Յէյդի պէյին:

— Փարիզի Օսմանեան դեսպան
Ճէմիլ փաշան, վիէնայի Օսմանեան
դեսպան Հոյտար էֆէնտի և Յիօբէն-
ցայի Օսմանեան դեսպան Բիւսթէմ
պէյ իրենց պաշտօնական անդերը
դառնալու հրաման ընդունած ըլլա-
լով, շարաթ օրը պատիւ ունեցան օ.
գոստ. Սուլթանին ներկայանալու: —
Բիւսթէմ պէյ երէկ մայրաքաղաքէս
Շամիայ ելած ըլլալու է դէպ ի Յիօ-
բէնցա:

— Գանուբեան կուսակալութենէն
Շաքիր և Բէգրաքի էֆէնտիները
մայրաքաղաքս եկած են, տեղոյն
ընդհանուր ժողովոյն անդէկազիբը Բի-
րբան մատուցանելու պաշտօնով:

—Ռուսմանիոյ կարողոս իշխանին հարսանեաց հանդէսը կատարուած օրըն, առգին Պուրբէշի մէջ ալ իշխանութեան կողմանէ յիտուն ազքատ երիտասարդ իրենց ուղած օրիորդներուն հետ ամուսնական կապով կապուեր են, առանց որևէ ծախք վճարելու :

—Ռուսմանիոյ իշխանութեան որոշմամբ, Պուրբէշի մէջ բժշկական դըպրոց մը և ապահովական ու անտեսական սնտուկներ պիտի հաստատուին մասերս :

—Պէյօղլու եկնի—չարչը սօսլա ծախտը գաղղիացի մը կգտնուի, որ խանութին վրոց ալ իւր ընտանեացը բնակարանն է : Անցեալ չորեքշաբթի օրը սասր կինը իւր սենեակը պառկած ատենը, առաւօտուն օգտատարներէն մէկը կհօջ քովը մաններով զանի երկու տեղէն շարաչար փրաւորեր է գաշայնով : Երկը կհօջը աղաղակը ւրսերով, կիպէ սենեակը կմանէ, և շարաղործը կսկսի փախչիլ, սակայն խեղճը հասնելով որ անշատաճառ պիտի բռնուի, ուստի փախչելու ատենը նոյն գաշայնովը ինքզինքն ալ կղարնէ և գեախնը կփռուի կիշնայ : Ատոր վրայ զսպթիշէները հասնելով, չարաղործը կվերցունեն հիւանդանոց կտանին, ինչպէս նաև խեղճ կինն ալ գարմանուելու վրայ է :

Տակաւին յայտնի չէ թէ, այս մարգը ինչ պատճառաւ սպաննելու եղած է իւր արթըր ամուսինը :

—Սոյրաքաղաքիս սպանիական գեապանն ալ գարձաւ, որ Եգիպտոս գացած էր Սուէիշի հանդիսին համար :

—Աւսարիոյ դիտար պաշտօնեաց

Պ. Պայթթ պատուէր զրկեր է մայրաքաղաքիս և Եգիպտոսի աւսարիական ներկայացուցչաց, որպէս զի չափաւրութեամբ վարուին Եգիպտոսի խընդրոյն մէջ :

—Անցեալ շաբթու կառավարութեան կողմանէ ծանուցուեցաւ որ օսմանեան լիրան 106 զուրուշէն աւելի չպիտի առնուի արուի և հակառակ վարուողները պիտի պատժուին, և արդարև քանի մ'օր ալ այսպէս եղաւ : սակայն վերջին երկու օրուան մէջ դարձեալ սկսաւ 107—108 զուրուշ ընել, և եթէ այսպէս անարդել շարունակէ՝ քիչ օրուան մէջ դարձեալ առջի դիները պիտի գանէ : Կը յուսամք որ այս անկարգութիւնը կառավարութիւնը լրամ ըլլալով, անյապաղ ազգու միջոցներ ձեռք կտանուին : —Ասկէց զատ շատ նպարա վաճառներ և ուրիշ այսպիսի արհեստատարներ իրենց ծախած ապրանքներուն գինները դարձեալ միևնոյն պահած են, մինչդեռ 106 զուրուշի հաշուով գինները բաւական իջնելու են :

Գաղղիոյ վինտորական գործոց պաշտօնեայն երկու վինտոր աքսորելու օրեր է, հասարակագետութեան կուսակցաց մէկ ժողովին անցեալները ներկայ գտնուած և անոր խորհրդակցութեանց ունկնդիր եղած ըլլալուն պատճառաւ :

Այս գէտըր մեծ դրդիւ տալով հասարակագետականաց, սկսեր են անոնց օգնութեան ու քաջալերութեան համար ստակ ժողովել և արդէն 2000 ֆրանգի գումար մը գոյացեր

է : կայսեր դէմ խօսող լրագիրներն ալ հասարակութեան յորդոր կկարգան եղեր , յիշեալ հանգանակութիւնը յաւաջ տանելու համար :

Ձինւորական գործոց պաշտօնեայն զաննոք աքտորել տուեր է , լսած ըլլալով որ հասարակապետական ժողովին մէջ մեծ պատիւ գտեր են : Մակայն կայսեր և կայսրութեան բարեկամ եղողներէն շատերը յիշեալ պաշտօնեայն կմեղադրեն եղեր , որ այսպէս պատճառ եղած է հասարակապետականները գրգռելու և թերեւս զինւորականաց միտքը արթնցունելու : Դիմադրութիւն կրնեն եղեր թէ պէտք էր չլսելու զարնել , քանի որ յայտնի է թէ բան մը քանի որ հալածուի՝ այնքան ընդհակառակն կտաքածի :

— Խօսք կայ թէ , Սուէիչի շրանցքին ընկերութիւնը 130 միլիոն ֆրանքի փոխառութիւն մ'ալ պիտի ընէ , շրանցքը պէտք եղած կերպով կատարելագործելու նպատակաւ :

— Գաղղիոյ պաշտօնէից մէջ փոփոխութիւն ըլլալու լուրը կհաստատուի բայց այս մասին տակաւին գործողութիւն մը եղած չէ :

— Լուր ելաւ թէ , Ռուսիոյ կառավարութեան արտաքին գործոց պաշտօնեայ անուանի կորչագօֆ իշխանը մեռեր է , բայց յետոյ ստուգուեցաւ որ մեռած չէ , այլ ծանր կերպով հիւանդ է :

Առաջիկայ 1867 տարւոյն Օրացոյցը , երեսագլխակ վանական մասիէն գեղեցիկ տպագրութեամբ իրոյս ըն-

ծայեալ , կիժախուի մայրաքաղաքիս բոլոր գրախճառաց քով :

Պօլիս Մահմուտ փաշայի վերի գըլուխը Գաշըզ ճի խանի քովի գրատունը ամեն տեսակ պիտանի գրքեր ու ուետարակներ , կադանդ չեքտալու յարմար , կծախուին աժան գնով : Նոյնպէս յիշեալ գրատունը կգտնուին գաղղիարէն , ու անգղիարէն և ուրիշ լեզուներով կարևոր գրեանք :

Սպարտէզ Աղգային անուն հրատարակութիւն մը մայրաքաղաքիս բոլոր գրախճառաց քով կծախուի : — Ասոր հեղինակը Անճնուէր ընկերութեան պանդուխտ աշակերտներէն մէկըն ըլլալով , քաջալերութեան արժանի է :

Փունըլը ձեռքէ ծախուելէ զատ կգտնուի նաև՝ Մադա Եօզուչու Գաւաֆեան ու Արևելեան և Մահմուտ Փաշա Խղմիրբեան գրախճառաց խանութները և Գաշըզ ճի խանի քովի գըլատունը :

Կ. ՊՕԼԻՍ . — ԳՈՆՍՈՒԼԵՏԷ

24 նոյեմ. չորեք .	Կրկնայ Կոյուեցու	49	3
23 նոյեմ. հինգ .	առաւօտ Բայուեցու	48	34
	Ժամը չորսին	48	35

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ
2. Մ. ԱԼՍՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ռ. Յ. ԳԻՐԳՃԵԱՆ